



Երեխաներ և դեռահասներ. Առողջության վերականգնում և վերականգնողական բուժման միջոցով

Խորհրդատվություն և օգնություն Գերմանիայի ողջ տարածքում

Հեռախոսով՝

Զանգահարե՛ք Գերմանիայի Կենսաթոշակային ապահովության ծառայության հետևյալ անվճար հեռախոսահամարով՝
0800 1000 4800

Մեր մասնագետները կպատասխանեն Ձեր հարցերին՝
Երկուշաբթիից հինգշաբթի ժամը 8.00–19.00
Ուրբաթ ժամը 8.00–15.30

Համացանցով՝

Շուրջօրյա
www.deutsche-rentenversicherung.de/kinderreha

Կամ ուղարկե՛ք մեզ էլ. նամակ հետևյալ էլ. փոստի հասցեով՝
info@deutsche-rentenversicherung.de
Դրա համար կարող եք օգտագործել նաև մեր կայքէջի „Kontakt“ հատվածը:

Կոնտակտային տվյալներ

Հրատարակող՝ Deutsche Rentenversicherung Bund
Abteilung Presse- und Öffentlichkeitsarbeit,
Kommunikation
10709 Berlin, Ruhrstraße 2
Փոստային հասցե՝ 10704 Berlin
Հեռախոս՝ 030 865-0, Ֆաքս՝ 030 865-27379
Կայքէջ՝ www.deutsche-rentenversicherung.de
Էլ.փոստ՝ drv@drv-bund.de
De-Mail: De-Mail@drv-bund.de-mail.de
Լուսանկարները՝ Փեթեր Թեշների, Գերմանիայի Կենսաթոշակային ապահովագրության դաշնային մարմնի լուսանկարչական պահոց, Առաջին էջի նկարը՝ © Մաքս Թոփչիի/Ֆոտոլիա
Տպագրությունը՝ Fa. H. Heenemann GmbH & Co. KG, Berlin

7-րդ խմբագրություն (12/2024), **Nr. 307**

Այս բրոշյուրը կազմում է Գերմանիայի Կենսաթոշակային ապահովագրության ծառայության մամուլի և հասարակության հետ կապերի բաժնի աշխատանքի մասը, այն տրվում է բացառապես անվճար և նախատեսված չէ վաճառքի համար:

Վերականգնողական բուժման ընթացքում երեխաներին կարելի է ուղեկցել, եթե դա պահանջվի վերականգնողական բուժման իրականացման կամ բուժման հաջողության համար: Ուղեկցումը կարող է անհրաժեշտ լինել նաև այն դեպքում, եթե Ձեր երեխան տասներկու տարեկանից փոքր է:

Եթե անհրաժեշտություն լինի, որ ընտանիքը վերականգնողական գործընթացում ներգրավվի, երեխային կարող են ուղեկցել նաև ընտանիքի մի քանի անդամներ:

Ի՞նչպես կարող եք դիմել երեխաների ու դեռահասների վերականգնողական բուժման համար

Բոլոր անհրաժեշտ ձևաթղթերը կարող եք գտնել համացանցում՝ www.deutsche-rentenversicherung.de/kinderreha հասցեով: Բոլոր ձևերը կարելի է լրացնել առցանց:

Դուք լրացնում եք՝
→ (G0200) դիմումի ձևը:
Բուժող բժիշկը լրացնում է՝

→ (G0612) բժշկական հետազոտության արդյունքների մասին եզրակացության ձևը և
→ (G0600) վճարման հաշվարկի ձևը:

(ցուցում՝ Գերմանիայի Կենսաթոշակային ապահովագրական ծառայության համար բժշկական հետազոտության արդյունքների մասին եզրակացությունը կարող է կազմել ցանկացած բժիշկ)

Դիմումը, բժշկական հետազոտության արդյունքների մասին եզրակացությունը և վճարման հաշվարկը պետք է ուղարկել Կենսաթոշակային ապահովագրության իրավասու մարմնին: Այդ մարմնից Դուք կստանաք գրավոր որոշում Ձեր դիմումի վերաբերյալ: Այլապես, կարող եք նաև դիմումն ուղարկել առցանց www.deutsche-rentenversicherung.de/eantrag-G0200 հասցեով և միաժամանակ վերբեռնել լրացված դիմումի հաշվետվությունը:

- **Վերականգնողական բուժման ծառայություններ երեխաների և դեռահասների համար**
- **Տեղեկատվություն ծնողների համար**
- **Ընթացքը, նախապայմանները և դիմելու կարգը**

Սիրելի ծնողներ,

Ձեր երեխայի առողջությունը կարևոր է Գերմանիայի Կենսաթոշակային ապահովագրության հիմնադրամի համար:

Այդ պատճառով Կենսաթոշակային ապահովագրության հիմնադրամն առաջարկում է վերականգնողական բուժման ծառայություններ երեխաների և դեռահասների համար, եթե նրանք քրոնիկ բնույթի հիվանդություններ ունեն, կամ նրանց առողջությունը վատթարացել է կամ վտանգի տակ է: Վերականգնողական բուժման արդյունավետությունն ապահովելու համար կարող են մատուցվել նաև օժանդակող թերապիայի ծառայություններ:

Այս բրոշյուրը պարզաբանում է կարևորագույն հարցեր երեխաների ու դեռահասների վերականգնողական բուժման վերաբերյալ: Մանրամասն տեղեկատվություն կարող եք գտնել համացանցի հետևյալ կայքէջում www.deutsche-rentenversicherung.de/kinderreha:

Ի՞նչպիսի վերականգնողական ծառայություններ կարող են առաջարկվել Ձեր երեխայի համար

Դեռահասային տարիքում վերականգնողական բուժումը կարող է բարձրացնել կյանքի որակը և լավացնել աշխատունակությունն ապագայի համար: Սակայն սկզբում այն պետք է վերականգնի կամ բարելավի Ձեր երեխայի առողջությունը և ֆիզիկական ունակությունները, որպեսզի նա կրկին կարողանա լիարժեք մասնակցել դպրոցական կյանքին ու լիարժեք անցկացնի ազատ ժամանակը:

Ի՞նչ է սպասում Ձեր երեխային

Երեխաների ու դեռահասների վերականգնողական բուժման համար առկա են բազմաթիվ մասնագիտացված կլինիկաներ, որոնք տեխնիկապես վերազինված են նորագույն բժշկական ստանդարտներին համապատասխան: Կլինիկայի ընտրության ժամանակ մենք փորձում ենք անհատական մոտեցում ցուցաբերել: Այս www.meine-rehabilitation.de կայքէջը կօգնի ձեզ որոշում կայացնել այդ հացրում: Դիմումի մեջ կարող եք նշել մինչև երեք նախընտրելի կլինիկա:

Ձեր երեխան կարող է ստանալ ինչպես ստացիոնար, այնպես էլ՝ ողջ օրվա կամ ընդհանուր ամբուլատոր վերականգնողական բուժում: Ստացիոնար վերականգնողական բուժումը որպես կանոն տևում է նվազագույնը չորս շաբաթ: Եթե բժշկական տեսանկյունից անհրաժեշտ լինի, այն կարող է նաև երկարաձգվել:

Սկզբում կկազմվի Ձեր երեխայի վերականգնողական բուժման անհատական ծրագիրը: Ըստ անհրաժեշտության՝ այն կպարունակի բժշկական, մանկավարժական, ֆիզիոթերապևտիկ կամ նաև մասնագիտացված ծառայություններ:

Ձեր երեխան բուժումը կստանա տարիքին համապատասխան խմբում: Որպեսզի դպրոցահասակ երեխաները հնարավորինս քիչ դասեր բաց թողնեն, նրանք կդասավանդվեն հիմնական առարկաների դասերը:

Ո՞ր հիվանդությունների դեպքում է ցուցված երեխաների և դեռահասների վերականգնողական բուժումը

Վերականգնողական բուժումը հիմնականում պահանջվում է այն ժամանակ, երբ Ձեր երեխայի առողջության վատթարացումը կարող է բացասական ազդեցություն ունենալ նրա հետագա աշխատունակության վրա: Նաև այն դեպքերում, երբ առողջական վիճակի պատճառով երեխան չի կարողանա կամ սահմանափակ կերպով կկարողանա մասնակցել դպրոցական կամ բուհական պարամունքներին: Վերականգնողական բուժումը կարող է վերացնել կամ նվազագույնի հասցնել այս սահմանափակումները և բարելավել Ձեր երեխայի առողջությունը:

Վերականգնողական բուժման անհրաժեշտությունն առաջ է գալիս ավելցուկային քաշի, շնչառական ուղիների, մաշկային և հենաշարժական ապարատի հիվանդությունների, հոգեկան խանգարումների և նյարդաբանական հիվանդությունների դեպքում:

Մյուս հիվանդությունների, հատկապես վարակիչ հիվանդությունների դեպքում, վերականգնողական բուժումը հնարավոր չէ:

Ի՞նչ նախապայմաններ պետք է ապահովվեն

Ծնողներից որևէ մեկը պետք է վճարի կենսաթոշակային ապահովության վճարները: Արդյո՞ք Ձեր դեպքում նախապայմաններն ապահովված են, թե ոչ, կարող եք տեղեկանալ մեր տեղեկատու և խորհրդատվական գրասենյակներից որևէ մեկում:

Մեր հուշումը.

Մեր տեղեկատվական և խորհրդատվական կենտրոններում կարող եք գտնել, թե արդյոք ձեր գործի դեպքում անհրաժեշտ պահանջները բավարարված են:



Մինչև ո՞ր տարիքը երեխաներին ու դեռահասներին կարող է տրամադրվել վերականգնողական բուժում

Հիմնականում երեխաների ու դեռահասների վերականգնողական բուժման համար կարելի է դիմել մինչև 18 տարեկան դառնալը: Մա կարող է երկարաձգվել մինչև 27 տարեկանը, եթե երիտասարդը սովորում է դպրոցում կամ անցնում է վերապատրաստում, մասնակցում է կամավոր սոցիալական կամ բնապահպանական տարվա միջոցառումներին կամ գտնվում է կամավոր դաշնային ծառայության մեջ: Նույնը գործում է նաև դեռահասների համար, ովքեր հաշմանդամության պատճառով ինքնուրույն չեն կարող հոգալ իրենց կարիքները:

Ո՞ր ծախսերն են վճարվում

- Երեխայի վերականգնողական բուժման ծախսերը
- Երեխայի կացարանային ու սննդի ծախսերը
- ճանապարհաձախսը
- Ըստ անհրաժեշտության՝ ուղեկցող անձի ծախսերը:

Ե՞րբ է հնարավոր ուղեկցել երեխային

Այն երեխաների համար, ովքեր դեռ չեն դարձել 15 տարեկան, դիմելու դեպքում կվճարվեն նաև այն անձի ժամանելու և մեկնելու ծախսերը, ով երեխային ուղեկցելու է ճանապարհի ընթացքում: